

ԹԻՎ 12 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 12 -Ա

«03» նոյեմբերի 2023թ.

ք.Արտաշատ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ Վ.ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023 թվականի հոկտեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Դվին համայնքում տեղի են ունեցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

2023 թվականի հոկտեմբերի 30-ին թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով թիվ 12/1 տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների արձանագրությունը, ամփոփել է Վերին Դվին համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները և արձանագրությունով վավերացրել:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ համայնքում քվեարկության արդյունքների վերաբերյալ:»:

Նշված իրավանորմի պահանջների հաշվառմամբ, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ 12/1 տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի արդյունքում որևէ էական փոփոխություն չի արձանագրվել, տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի որևէ դիմում չի ստացվել, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ ևս չի իրականացրել քվեարկության արդյունքների վերահաշվարկ՝ թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2023 թվականի նոյեմբերի 3-ին կազմել է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ:

2023 թվականի հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Դվին համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել:

2023 թվականի հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Դվին համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների

ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով դիմումներ (բողոքներ) չեն ներկայացվել:

Թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է 2023 թվականի հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Դվին համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 12/1 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը և 31.10.2023թ. կազմված արձանագրությամբ հաստատել, որ քվեարկության օրը՝ 2023 թվականի հոկտեմբերի 29-ին, թիվ 12/1 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում խախտումների վերաբերյալ գնահատականներ արձանագրված չեն:

Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով համայնքում քվեարկության արդյունքների արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընդունած որոշումը, ամփոփում է համայնքում քվեարկության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ:»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

2023 թվականի հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Դվին համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել Ընտրական օրենսգրքի խախտումներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա:

Թիվ 12 ընտրատարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ՝



Գ.ԴԱՎԹՅԱՆ